Հաշվետվություն

2025 թվականի մարտի 31-ից ապրիլի 4-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**

   Վահրամ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՑԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ), Գլխավոր տնօրեն:

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա), 2025թ. մարտի 31-ից ապրիլի 4-ը:

4. **Հրավիրող կողմը**

   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցել ԱԷՄԳ կողմից կազմակերպված «ԱԷՄԳ տեխնիկական և գիտական աջակցության կազմակերպությունների ղեկավար կոմիտեի 21-րդ նստաշրջանի ֆորումի աշխատանքներին» (այսուհետ՝ «TSOF»):

6. **Քննարկված թեմաները**

   - «TSOF» 20-րդ նիստում պլանավորված միջոցառումների կատարման արդյունքների քննարկում;
   - 2025-2028 թթ. իրականացվող աշխատանքների պլանավորման խնդիրները;
   - 2025-2026 թթ. «TSOF» միջոցառման կոնֆերանսի և սեմինարների կազմակերպման միջոցառումների իրականացումը:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Հանդիպումներ և առանձնազրույցներ եղավ «TSOF» 21-րդ նստաշրջանի նախագահ պրն. Մայքլ Վան Հեյսենդոնկի (Բելգիա), համանախագահ տիկին Կարլա Էյբլ-Շվեյգերի (Գերմանիա) հետ, Սլովակիայի ներկայացուցիչ պրն. Լիշկոյի, ՌԴ ներկայացուցիչ պրն. Ալեքսանդր Խամազայի հետ և այլն:

   Բացի օրակարգում ընդգրկված հարցերից, առանձին քննարկան առարկա դարձան ԱԷԿ-ներ շահագործող երկրների տեխնիկական աջակցություն ցույց տվող կազմակերպությունների դերի և նշանակության խնդիրները և այլն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռքբերվեց 21-րդ նիստի որաշումների կատարման ընթացքի վերաբերյալ պարբերաբար հեռահար քննարկման կազմակերպել օպերատիվ լուծում տալու առաջարկվող խնդիրների վերաբերյալ:

«TSOF» 21-րդ նիստի օրակարգում քննարկվող հարցերի շրջանակից դուրս այլ որոշումներ և փաստաթղթեր չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկություն եղավ միջանկյալ նիստեր տարբեր երկրներում կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ, նախապես ժամկետները համաձայնեցնելով տվյալ երկրի գերատեսչական մարմնի և Կոմիտեի հետ:

Առաջիկայում նիստը որոշվեց անցկացվել Դուշանբեում (Տաջիկիստան) 2025թ. մայիսի վերջին:

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
11.04.2025թ.